



«ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»

“ECOLOGICAL RIGHT”

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

ENVIRONMENTAL

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ORGANIZATION

NON-GOVERNMENTAL

e-mail: info@ecoright.am

e-mail: info@ecoright.am

Ընդերքօգտագործման թույլտվությունների համապատասխանությունը օրենսդրության նորմերին

Հետազոտության նպատակն է պարզել, թե մետաղական հանքավայրերի շահագործման համար տրված ՇՄԱԳ դրական փորձաքննական եզրակացությունները որքանո՞վ են համապատասխանում 2014թ. ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենքով (ՇՄԱԳ օրենք) ամրագրված պահանջներին: Պետք է ուսումնասիրել ՇՄԱԳ նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո արդյունահանման նպատակով տրված բոլոր մետաղական հանքավայրերի նախագծերը և դրանց տրված դրական փորձաքննական եզրակացությունները՝ այդ թվում արդեն իսկ շահագործման թույլտվություն ունեցող հանքավայրերի նոր նախագծերի ՇՄԱԳ հաշվետվություններն ու դրանց տրված դրական փորձաքննական եզրակացությունները:

Մասնավորապես, հետազոտությունն ընդգրկում է հետևյալ երկու խումբ հարցերը՝

- Հայաստանի տարբեր մարզերում մետաղական հանքերի շահագործման համար փորձաքննական եզրակացությունների ուսումնասիրություն.
 - Արդյո՞ք ընկերությունների կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվություններում առկա են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ փորձաքննության ենթակա բոլոր հարցերը,
 - Արդյո՞ք ՀՀ բնապահպանության նախարարի կողմից հաստատված ՇՄԱԳ դրական փորձաքննական եզրակացություններով փորձաքննության են ենթարկվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և

փորձաքննության մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ փորձաքննության ենթակա բոլոր հարցերը,

- Արդյո՞ք ՇՄԱԳ դրական փորձաքննական եզրակացությամբ իրականում գնահատվել են ընկերությունների կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության տվյալների արժանահավատությունն ու հիմնավորվածությունը, թե՞ փորձաքննական եզրակացությամբ պարզապես կոնսպեկտավորվել է հաշվետվության տեքստը՝ առանց այդ տվյալների ինքնուրույն գնահատման:
- ՇՄԱԳ գործընթացում մարդու առողջության վրա ազդեցության փորձաքննությունների/կարծիքների ուսումնասիրություն.
 - Արդյո՞ք փորձաքննական եզրակացության մեջ ներկայացված է մարդու առողջության վրա ազդեցության գնահատման փորձաքննություն
 - Եթե մարդու առողջության վրա ազդեցության փորձաքննություն չի իրականացվել, ապա ի՞նչ եղանակով է տրվել մարդու առողջության վրա ազդեցության գնահատականը:

Հետազոտության իրականացման ժամկետն է 6 ամիս:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ ապրիլի 22, 2019 թ.

Հայտերն անհրաժեշտ է ուղարկել info@ecoright.am էլ հասցեին: Նամակի առարկան պետք է նշել՝ Ecoright EIA Research, անունը /ազգանունը

Հետազոտության մեթոդաբանության և մանրակրկիտ ժամանակացույցի վերաբերյալ առաջարկները կարող են արվել հետազոտության համար հայտ ներկայացրած մասնակիցների կողմից (փաստաթղթային ուսումնասիրություններ, հարցազրույցներ, դատական գործերի ուսումնասիրություններ և այլն):